

Կեսարացւոյ խօսքերէն կրնանք միայն հետեւցնել, թէ Տ. Կիրակոս մասնակցած է Միութեան չարժման, թերեւս նաեւ մասնաւոր մղում տուած անոր :

Վայրապար է Կեսարացւոյ թերահաւատութիւնը հայ մատենագրութեան անաղարտութեան մասին : Դարերը ունեցած են իրենց ըմբռնումները . ապրած են ազդեցութիւններու տակ, եւ մատենագիրները արտայայտուած են ինչպէս ժամանակները թելադրած են : Մասնաւորապէս համարձակ եւ առանց ակնառութեան խօսած է Ներսէս Լամբրոնացի :

Ղուկաս Լոռեցին, զոր կը յիշէ Կեսարացին, իրրեւ հեղինակ գրուածքի մը, ուր «վեց գլխով» քննութեան առնուած է Ներսէս Լամբրոնացւոյ Պատարագի մեկնութիւնը, այլուստ անձանօթ է :

Հաւանօրէն ապրած է ԺԶ. դարու առաջին կէսին եւ նոյն է համանուն Հաղրատացւոյ հետ, որ կը գործէ ի Սանահին : 1525ին օրինակուած Սաղմոսարանի մը²⁷ Յիշատակարանին մէջ կ'ըսուի. «գրեցաւ ի սուրբ ուխտս Սանահին, ընդհովանեաւ սուրբ Աստուածածնի ամենափրկիչ կաթողիկէի. յիշեցէք զԶաքարիա քահանայն . . . յառաջնորդութեան Ղուկաս եպիսկոպոսի եւ Ղուկաս բարունապետ վարդապետի ձեռագրչի Քերականի, որ գաւրինակն էառ ի Կիպրոս կղզւոյ» :

²⁷ Ի Զեռագիրս Տարօնոյ :